ԲՈՒԽԱՐԱՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPEENE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲՈՒԽԱՐԱՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 37819/03)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

10 հունվարի 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

10/04/2012

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

ԲՈՒԽԱՐԱՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ժոզեփ Քասադեւալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Կորնելիու Բիրսան [Corneliu Bírsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էխբերտ Մայեր [Egbert Myjer],

Ինետա Զիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Միհայ Պուալելունջ [Mihai Poalelungi]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2011 թվականի նոյեմբերի 29-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Հայկ Բուխարատյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2003 թվականի նոյեմբերի 28-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 37819/03) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Ջորջթաունում (Կանադա) գործող իրավաբան պրն Ջ.Մ. Բըրնսը, Պաթերսոնում (ԱՄՆ) գործող իրավաբան պրն Ա. Քարբոնոն եւ Երեւանում գործող իրավաբան պրն Ռ. Խաչատրյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն)

ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2005 թվականի սեպտեմբերի 6-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատի մասին ծանուցել Կառավարությանը:

4. 2011 թվականի հունիսի 23-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է կիրառել Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետը եւ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը միաժամանակ:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1980 թվականին եւ ապրում է Երեւանում:

Ա. Գործի նախապատմությունը

6. Դիմումատուն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ է: 1993 թվականից ի վեր նա հաճախել է այդ կազմակերպության տարբեր կրոնական ծիսակատարությունների եւ մկրտվել է 1994 թվականի հունիսի 26-ին՝ 13 տարեկան հասակում:

7. 1997 թվականի հունվարի 4-ին դիմումատուն հաշվառվել է Շահումյանի զինվորական կոմիսարիատում որպես զինապարտ:

8. 1998 թվականի սեպտեմբերին, երբ լրացել է դիմումատուի տասնութ տարին, վերջինս նամակով դիմել է զինվորական կոմիսարիատ՝ հայտնելով, որ ինքը հրաժարվում է զինվորական ծառայություն անցնելուց իր կրոնական համոզմունքների պատճառով: Միեւնույն ժամանակ նա նաեւ լքել է տունը՝

վախենալով, որ իրեն բռնի ուժով կտանեն կոմիսարիատ:

9. Ըստ դիմումատուի՝ հաջորդող ամիսների ընթացքում զինվորական անձնակազմն անհանգստացրել է իր ընտանիքի անդամներին՝ փորձելով դիմումատուին պարտադրաբար ուղարկել զինվորական ծառայության:

10. 1998 թվականի դեկտեմբերի 15-ին դիմումատուն նույնաբովանդակ նամակներ է ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն եւ Շահումյանի զինվորական կոմիսարիատ՝ պնդելով, որ զինվորական ծառայություն անցնելը դեմ է իր խղճին եւ կրոնական համոզմունքներին, եւ որ ինքը պատրաստ է իրականացնել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

11. 2000 թվականի հունվարի 28-ի նամակով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունը գրավոր տեղեկացրել է դիմումատուին, որ եթե նա ներկայանա զինվորական ծառայություն անցնելու համար, ապա վերջինիս նկատմամբ քրեական գործ չի հարուցվի: Նամակով նաեւ դիմումատուին կոչ էր արվում կատարել հայրենիքի հանդեպ քաղաքացիական եւ որդիական իր պարտքը եւ զինվորական ծառայություն իրականացնելով՝ անցնել կյանքի հասունության դպրոցը:

12. Վերը նշված նամակը ստանալուց մեկ տարի հետո դատախազի օգնական Կ.-ն կապ է հաստատել դիմումատուի հետ: 2001 թվականի ապրիլին դիմումատուն գնացել է Կ.-ի հետ հանդիպման: Դիմումատուի պնդմամբ իրեն տեղեկացրել են, որ քրեական գործ չի հարուցվելու, եւ իրեն պարտադրելու են զինվորական ծառայություն անցնել: Դիմումատուին մեղադրել են հայրենիքի դավաճան լինելու մեջ, նրա կրոնական համոզմունքները ենթարկվել են ծաղր ու ծանակի, ինչպես նաեւ նրան ծաղրել ու անպատվել են բանակում չծառայելու համար:

13. 2001 թվականի հուլիսի 5-ին դիմումատուն մեկ այլ նամակ է ուղարկել իշխանություններին՝ մեկ անգամ եւս բացատրելով բանակում ծառայելուց

հրաժարվելու իր դրդապատճառները:

Բ. Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը

14. 2002 թվականի ապրիլի 8-ին, Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն, քրեական գործ է հարուցվել դիմումատուի կողմից ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու փաստի առթիվ:

15. 2002 թվականի մայիսի 10-ին դիմումատուին պաշտոնական մեղադրանք է առաջադրվել ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար, եւ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

16. 2002 թվականի մայիսի 13-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու եւ դիմումատուի նամակագրության նկատմամբ վերահսկողություն սահմանելու մասին:

17. 2002 թվականի նոյեմբերի 26-ին դիմումատուն, տեղեկանալով, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել, ներկայացել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն, որտեղ էլ անմիջապես ձերբակալվել է:

18. 2002 թվականի դեկտեմբերի 1-ին դիմումատուին ազատ են արձակել՝ բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրություն վերցնելուց հետո:

19. 2003 թվականի ապրիլի 2-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել եւ դատապարտել ազատազրկման՝ երկու տարի ժամկետով:

20. Չպարզված ամսաթվին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

21. 2003 թվականի մայիսի 2-ին Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել Վարչական շրջանի դատարանի դատավճիռը:

22. 2003 թվականի մայիսի 12-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պնդելով, որ, *inter alia (ի թիվս այլնի)*, դատարանի կողմից իրեն մեղավոր ճանաչելը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքները:

23. 2003 թվականի մայիսի 30-ին Վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողել դիմումատուի դեմ կայացրած մեղադրական դատավճիռը:

24. 2003 թվականի հունիսի 21-ին դիմումատուն ենթարկվել է ազատազրկման:

25. 2003 թվականի դեկտեմբերի 11-ին դիմումատուն սահմանված պատժից մոտ վեց ամիսը կրելուց հետո պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

26. Ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համառոտ նկարագրի համար տե՛ս *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի* ([ՄՊ] գործով վճիռը [*Bayatyan v. Armenia*] [GC]], թիվ 23459/03, §§ 41-45, 2011 թվականի հուլիսի 7):

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

27. Դիմումատուն բողոք է ներկայացրել այն մասին, որ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար իրեն դատապարտելով խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի, քարոզչության, արարողությունների եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների»:

Ա. Ընդունելիությունը

1. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը

28. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի, քանի որ նա պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու պահանջով չի դիմել Կառավարություն, ինչպես պահանջվում է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով:

29. Դիմումատուն պնդել է, որ սպառել է իրավական պաշտպանության ներպետական բոլոր արդյունավետ միջոցները՝ իր դեմ կայացրած մեղադրական դատավճիռը բողոքարկելով Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարաններում: Ամեն դեպքում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը չէր կարող համարվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

30. Դատարանը նշում է, որ Կառավարությունը նման փաստարկ առաջ է քաշել նաեւ *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (որոշում) [Bayatyan v. Armenia]*

(*(dec.)*, թիվ 23459/03, 2006 թվականի դեկտեմբերի 12) գործում, որը մերժվել է: Հետեւյալ գործով այլ եզրակացության հանգելու անհրաժեշտություն չկա:

31. Հետեւաբար այս առարկությունը պետք է մերժվի:

2. Եզրակացությունը

32. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Արդյոք եղել է միջամտություն

33. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին որեւէ միջամտություն չի եղել: Նրանք հայտարարել են, որ 9-րդ հոդվածը դիմումատուի գործով կիրառելի չի եղել, քանի որ, ինչպես մեկնաբանել է նախկին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը, այն չի երաշխավորում համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը:

34. Դիմումատուն պնդել է, որ 9-րդ հոդվածն իր գործով կիրառելի է, եւ որ իր՝ կրոնի արտահայտման ազատության նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն:

35. Դատարանը նշում է, որ Մեծ պալատը վերջերս լուծում է տվել այս խնդրին՝ սահմանելով, որ զինվորական ծառայությունից հրաժարումը, եթե այն առաջացել է բանակում ծառայելու պարտականության եւ անձի խղճի կամ խորը եւ նրա կողմից անկեղծորեն դավանվող կրոնական կամ այլ համոզմունքների միջեւ լուրջ եւ անհաղթահարելի հակասության արդյունքում, բավարար չափով

ծանրակշիռ, լուրջ, հիմնավորված եւ կարեւոր համոզմունք կամ հավատք է՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառման համար (տե՛ս *Բայաթյանի* գործը՝ վերեւում հիշատակված, § 110): Այդ գործով Մեծ պալատը եզրակացրել է, որ 9-րդ հոդվածը կիրառելի է դիմումատուի գործով, որը նույնպես Եհովայի վկա էր եւ ելնելով կրոնական համոզմունքներից՝ հրաժարվել էր բանակում ծառայելուց՝ համարելով, որ զինվորական ծառայությանն իր կողմից հակադրվելը հետեւանք է իր կողմից անկեղծորեն դավանվող կրոնական համոզմունքների, որոնք լուրջ ու անհաղթահարելի հակադրության մեջ են գտնվում զինվորական ծառայություն անցնելու իր պարտականության հետ (տե՛ս նույն տեղում, § 111):

36. Դատարանը նշում է, որ սույն գործի հանգամանքները գործնականում նույնական են: Այդ իսկ պատճառով այն մերժում է Կառավարության փաստարկը եւ գտնում, որ 9-րդ հոդվածը կիրառելի է դիմումատուի գործով:

37. Դատարանը եզրակացնում է, որ զորակոչին չներկայանալով՝ դիմումատուն արտահայտել է իր կրոնական համոզմունքները: Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար նրան դատապարտելը 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կրոնի արտահայտման ազատության՝ նրա իրավունքին միջամտություն է (տե՛ս նույն տեղում, § 112): Նման միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին, եթե այն «սահմանված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ կետով [9-րդ հոդվածի] սահմանված մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ եւ «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բուսկարինին եւ այլք ընդդեմ Սան Մարինոյի* [ՄՊ] [*Buscarini and Others v. San Marino*] [GC], թիվ 24645/94, § 34, ՄԻԵԴ 1999-I):

2. Արդյոք միջամտությունը եղել է արդարացված

ա) Սահմանված է օրենքով

38. Դիմումատուն նշել է, որ միջամտությունն օրենքով նախատեսված չի եղել, քանզի այն խախտել է ՀՀ Սահմանադրությունը, այն պարտավորությունները, որոնք Հայաստանի Հանրապետության իշխանությունները ստանձնել են՝ անդամակցելով Եվրոպայի խորհրդին, ինչպես նաեւ Հայաստանի կողմից ստանձնած այլ միջազգային պարտավորություններ, որոնք բխում են «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածից:

39. Կառավարությունն այս հարցի առնչությամբ մեկնաբանություն չի ներկայացրել:

40. Դատարանը, ելնելով սույն գործի նպատակներից եւ միջամտության անհրաժեշտության վերաբերյալ իր եզրահանգումներից (տե՛ս 44-45-րդ պարբերությունները), նպատակահարմար է գտնում չքննարկել միջամտության՝ օրենքով սահմանված լինելու հարցը (տե՛ս *Բայաթյանի գործը՝ վերեւում հիշատակված,* § 116):

բ) Իրավաչափ նպատակը

41. Դիմումատուն նշել է, որ այդ միջամտությունն իրավաչափ նպատակ չի հետապնդել: 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությունն ազգային անվտանգության շահերից ելնող սահմանափակումներ չի թույլատրում, իսկ դիմումատուին դատապարտելու ընթացքում ներպետական դատարանների կողմից որեւէ այլ նպատակ չի վկայակոչվել:

42. Կառավարությունն այս հարցի առնչությամբ մեկնաբանություն չի ներկայացրել:

43. Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշել, թե արդյոք միջամտությունը հետապնդել է 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իրավավաչափ նպատակ, թե՝ ոչ, քանի որ այն ամեն դեպքում ներքոնշյալ պատճառներով չէր համապատասխանում այդ դրույթներին (տե՛ս նույն տեղում, § 117):

գ) Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

44. Դիմումատուն պնդել է, որ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ քրեական պատժամիջոցների կիրառումը նույնիսկ այն քիչ անդամ պետություններում, որտեղ դեռեւս չի ներդրվել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Հայաստանի Հանրապետության իշխանությունները դա գիտակցել են, երբ պարտավորություն են ստանձնել զերծ մնալ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց ազատազրկելուց նույնիսկ մինչեւ այդ [այլընտրանքային քաղաքացիական] ծառայությունն ապահովող օրենքի ընդունումը: Բացի այդ, նրա հանդեպ կիրառված պատիժն ամբողջովին անհամաչափ [պատիժ] է եղել ժամանակակից ժողովրդավարական պետությունում:

45. Կառավարությունն այս հարցի առնչությամբ մեկնաբանություն չի ներկայացրել:

46. Դատարանը կրկին նշում է, որ, ինչպես արտացոլված է 9-րդ հոդվածում, մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը Կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» հիմքերից մեկն է: Այս ազատությունը կրոնական տեսանկյունից հավատացյալների ինքնությունը եւ նրանց կողմից կյանքի իմաստավորումը հաստատելու կարեւորագույն բաղադրատարրերից մեկն է, սակայն այն նաեւ կարեւոր արժեք է աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների եւ կրոնական կողմնորոշում չունեցողների համար: Ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասը կազմող

բազմակարծությունը, որը մեծ կորուստների գնով ձեռք է բերվել դարերի ընթացքում, կախված է դրանից: Այդ իրավունքը ներառում է, inter alia, կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու եւ կրոնը դավանելու կամ չդավանելու ազատությունը (տե՛ս *Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի [Kokkinakis v. Greece],* 1993 թվականի մայիսի 25, § 31, շարք Ա, թիվ 260-Ա, *Բուսկարինին եւ այլք [Buscarini and Others]*՝ վերը նշված, § 34, եւ *Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Leyla Şahin v. Turkey [GC]],* թիվ 44774/98, § 104, ՄԻԵԴ 2005- XI):

47. Չնայած կրոնի ազատությունը հիմնականում անհատի խղճի հարցն է, սակայն այն, *inter alia*, ենթադրում է նաեւ անձի՝ կրոնն արտահայտելու ազատություն ինչպես միանձնյա եւ մասնավոր կարգով, այնպես էլ այլոց հետ համատեղ, հրապարակավ կամ այն մարդկանց շրջանակում, ովքեր ունեն նույն հավատը: 9-րդ հոդվածը թվարկում է անձի կրոնի կամ հավատքի արտահայտման մի քանի ձեւ՝ պաշտամունք, քարոզչություն, արարողությունների եւ ծեսերի անցկացում (տե՛ս *Հասանը եւ Չաուշն ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ] [*Hasan and Chaush v. Bulgaria*] [GC],* թիվ 30985/96, § 60, ՄԻԵԴ 2000-XI, եւ *Բեսարաբիայի մետրոպոլիտանական եկեղեցին եւ այլք ընդդեմ Մոլդովայի [Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova],* թիվ 45701/99, § 114, ՄԻԵԴ 2001-XII):

48. Դատարանը նշում է, որ նմանատիպ գանգատ արդեն քննել է *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի* գործով եւ եզրակացրել, որ դիմումատուի նկատմամբ պատժամիջոցի կիրառումն այն դեպքում, երբ նրա խղճի եւ համոզմունքի հետ կապված պահանջմունքների որեւէ բավարարում չի իրականացվել, չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս *Բայաթյանի գործը*՝ վերեւում հիշատակված, §§ 124-125): Սույն գործում դիմումատուն նույնպես «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ է, որը չի ցանկացել անցնել զինվորական ծառայություն՝ ոչ թե անձնական շահերից կամ հարմարավետությունից ելնելով, այլ հիմնվելով միայն իր կողմից անկեղծորեն դավանվող կրոնական համոզմունքների վրա, իսկ կիրառված քրեական պատժամիջոցները նման հնարավորության բացակայության հետեւանք են եղել:

49. Վերը նշված պատճառներից ելնելով՝ Դատարանը գտնում է,

որ դիմումատուին դատապարտելը հանդիսացել է միջամտություն, որը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Հետեւաբար տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

50. Դիմումատուն ներկայացրել է նաեւ մի շարք այլ բողոքներ՝ կապված Կոնվենցիայի 9-րդ եւ 14-րդ հոդվածների հետ:

51. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը եւ այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր իրավասության ներքո, գտնում է, որ դրանք չեն պարունակում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Հետեւաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի, գանգատի այդ մասը պետք է մերժվի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

52. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

53. Դիմումատուն պահանջել է 10,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

54. Կառավարությունն այս պահանջի վերաբերյալ առարկություն

չի ներկայացրել:

55. Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ կրոնական համոզմունքներից ելնելով բանակում ծառայելուց հրաժարվելու արդյունքում դատապարտվելու եւ ազատազրկման ենթարկվելու համար: Ելնելով գործի փաստական հանգամանքներից եւ արդարության սկզբունքից՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 6,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

56. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 12,250 եվրո՝ որպես ներպետական ատյաններում եւ Դատարանում կրած ծախերի դիմաց հատուցում: Դիմումատուն ներկայացրել է մեկ ներպետական եւ երկու օտարերկրյա փաստաբանների ծախսերի նախահաշիվները, որոնցում նշված են եղել մինչեւ դատարանում գործի քննությունը ու տվյալ գործով վերջնական որոշման կայացման պահը՝ յուրաքանչյուր փուլի դիմաց վճարման ենթակա միանվագ գումարները:

57. Կառավարությունն այս պահանջի առնչությամբ մեկնաբանություն չի ներկայացրել:

58. Դատարանը վերահաստատում է, որ դատական ծախսերը հատուցելի են միայն այնքանով, որքանով դրանք առնչվում են հայտնաբերված խախտմանը (տե՛ս *Բեյելերն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Beyeler v. Italy] [GC]*, թիվ 33202/96, § 27, ՄԻԵԴ 2000-I): Սույն գործում դիմումատուի կողմից Դատարանին ներկայացրած գանգատը ներառում էր Կոնվենցիայի 9-րդ եւ 14-րդ հոդվածների առնչությամբ այլ բողոքներ, որոնք հայտարարվել են անընդունելի: Հետեւաբար դիմումատուի պահանջը չի կարելի բավարարել ամբողջությամբ, այլ այն պետք է համապատասխանաբար կրճատել: Առկա տեղեկությունների հիման վրա կատարելով սեփական գնահատումը՝ Դատարանը դիմումատուին շնորհում է

4,000 եվրո՝ որպես ծախսերի եւ ծախքերի հատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

59. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. *Հայտարարում է* ձայների մեծամասնությամբ, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով, գանգատի՝ զինվորական ծառայություն անցնելուց խուսափելու հիմքով դիմումատուի դատապարտմանը վերաբերող մասն ընդունելի, իսկ մնացած մասը՝ անընդունելի:

2. *Վճռում է* ձայների վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

3. *Վճռում է* ձայների վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն ՀՀ դրամի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 4 000 եվրո (չորս հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչեւ վճարման օրը պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում* է միաձայն դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հունվարի 10-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Կեսադա
[Santiago Quesada]
Քարտուղար

Ժոզեփ Քասադեւալ
[Josep Casadevall]
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Գյուլումյանի առանձին կարծիքը:

Ժ.Ք.Մ.

Ս.Կ.

ԴԱՏԱՎՈՐ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Սույն գանգատը ներկայացվել է *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի* [*Bayatyan v. Armenia*] (ՄՊ, թիվ 23459/03, 2011 թվականի հուլիսի 7) գործի հետ միեւնույն ժամանակ եւ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ներքո բարձրացնում է միեւնույն խնդիրը:

Բայաթյանի գործով Մեծ պալատը քվեարկել է վերը նշված հոդվածի

խախտում ճանաչելուն կողմ, եւ սույն գործով Պալատի մեծամասնությունը հետեւել է միեւնույն մոտեցմանը:

Բայաթյանի գործով իմ կողմից ներկայացված մանրամասն չհամընկնող կարծիքում նշված պատճառներով ես քվեարկել եմ մեծամասնությանը դեմ՝ գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության առնչությամբ եւ այսպիսով, ես նույնն արեցի սույն գործով: